



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

### ՈՐՈՇՈՒՄ

27 նոյեմբեր, 2019 թվականի № 55-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N 29-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 3-ի N 202-Ն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը, Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2019 թվականի հոկտեմբերի 29-ի N 51-Լ որոշմամբ հաստատված ճշգրտված ֆինանսական հաշվետվությունները, «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կանոնադրությունը, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2019 թվականի թվականի նոյեմբերի 20-ի N 01/3-3/19182-2019 գրությունը և ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջներով՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը ո թ ո ղ ու մ է.

1. Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2019 թվականի հունիսի 27-ի «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի տարեկան շահութաբաժնի սահմանված չափը և ստացված զուտ շահույթի բաշխման ուղղությունները հաստատելու մասին» N 29-Լ որոշման 1-ին և 2-րդ կետերը փոփոխել՝ շարադրելով նոր խմբագրությամբ՝

«1. Հաշվի առնելով, որ 2018 թվականի գործունեության արդյունքում Ընկերության ճշգրտված շահութաբաժնի հաշվարկման բազան կազմում է 39,765.0 (երեսունինը հազար յոթ հարյուր վաթսունհինգ) հազ. ՀՀ դրամ վնաս՝ Ընկերության կանոնադրական կապիտալում պետության սեփականությունը հանդիսացող բաժնեմասի դիմաց 2018 թվականի գործունեության արդյունքներով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա տարեկան շահութաբաժնի չափը սահմանել 0 (զրո) ՀՀ դրամ:

2. Հաշվի առնելով, որ 2018 թվականի գործունեության արդյունքում Ընկերության ճշգրտված զուտ վնասը կազմել է 49,923.0 (քառասունինը հազար ինը հարյուր քսաներեք) հազ. ՀՀ դրամ, Ընկերության կանոնադրական կապիտալում պետության սեփականությունը հանդիսացող բաժնեմասի դիմաց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի չվճարել և Ընկերության պահուստային հիմնադրամի համալրման ուղղությամբ հատկացումներ չիրականացնել:»:

2. Սույն որոշման պահանջների կատարումը հանձնարարել Ընկերության գործադիր տնօրենին:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈՇՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

27 նոյեմբեր, 2019 թվականի  
ք. Երևան